

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### Ղալարիկ գյուղական համայնքի ղեկավարի (2012 թվականի)

2012թ. ընթացքում Ղալարիկ գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 125 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ: Գյուղապետարանը բնակիչներին տվել է 1115 տեղեկանք, ստացել 134 պաշտոնական նամակ, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

- 2012թ.-ի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները, փողոցները, բազմահարկ շենքերի բակերը, սպորտ-հրապարակի տարածքը, մանկապարտեզի, երաժշտական դպրոցի, համայնքի վարչական տարածքով անցնող Երևան-Գյումրի մայրուղու և երկաթգծի տարածքները:

-Նախագինակոչային տարիքի պատանիներից 44-ը ներկայացել են Արմավիրի Զինկոմ և տարեկան գինակոչը գնահատվել է բավարար:

- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշտորտման աշխատանքներ:

- Կարկտահարության վնասները մասամբ վերականգնելու համար համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և ժողովրդին է բաժանվել տարբեր տեսակի սերմեր՝ նոր ցանքս և սածիլավորում կատարելու համար:

- Մարզպետարանի և գյուղապետարանի համատեղ աջակցությամբ համայնքում լուծվել է խորգային հորի հարցը: Ավարտվել է խորքային հորի հորատման աշխատանքները, որի համար համայնքի բյուջեից փոխանցվել է 4000.0 հազար դրամ: Այժմ համայնքն ապահովված է մշտական ջրով:

- Համայնքի տարածքում կատարվել է խմելու ջրի ջրագծի վերանորոգման աշխատանքներ և շատ մասերում տեղադրվել է ջրաչափ սարքավորումներ խմելաջրի քլորացման հարցը լուծվում է ժամանակին:

- 2012 թվականի փետրվարի 12-ին կայացավ համայնքի ղեկավարի ընտրությունները, որը անցավ հաշտ և խաղաղ մթնոլորտում և վերընտրվեց համայնքի ղեկավար Պարզև Սաղաթեյանը:

- 2012 թվականի մայիսի 6-ին կայացավ ՀՀ Ազգային ժողովի ընտրությունները, որի անցկացման և կայացման համար կազմակերպչական առումով իրենց տեղերում էին համայնքի ղեկավարը և գյուղապետարանի աշխատակազմը:

- 2012թ.-ի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա) հողի հարկ - 10720.6 հազար դրամ,

բ) գույքահարկ - 1782.3 հազար դրամ,

գ) տեղական տուրք - 421.7 հազար դրամ,

դ) այլ եկամուտներ - 3609.7 հազար դրամ,

ե) պաշտոնական դրամաշնորհ - 46524.2 հազար դրամ,

զ) սուբվենցիա - 15165.2 հազար դրամ,

է) հողի օտարումից եկամուտ - 1247.4 հազար դրամ

- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-տնտեսական միջոցառումներ և ծրագրեր՝

ա) համայնքում նշվել է բանակի օրը, մարտի 8-ը՝ կանանց միջազգային տոնը, մայիսի 9-ը՝ հայրենական մեծ պատերազմի հաղթանակի և Շուշիի ազատագրման օրը,

բ) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, տարեց կանանց, հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին, արցախյան պատերազմի մասնակիցներին, հաշմանդամներին տրվել է դրամական օգնություն 4800.0 հազար դրամ,

գ) բանակի օրվա առթիվ համայնքում կազմակերպվել է միջոցառումներ, որի համար ծախսվել է 350.0 հազար դրամ,

դ) հանրապետության տոնի առթիվ համայնքում կազմակերպվել է միջոցառում, որի համար ծախսվել է 243.0 հազար դրամ,

ե) աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 996.2 հազար դրամ,

զ) ամանորյա միջոցառումների կազմակերպման համար ծախսվել է 207.0 հազար դրամ,

